ԴԿ = ԸՍՏԵՂԻ



Ծ. ԽՄԲ. — C. L. F. Panckoucke-ի մեր երգերու մասին գրած ուսումնասիրութիւնը նախորդ և ներկայ «Բազմավէպ»ի էջերուն մէջ լոկ իբրև ի հետաքրքրութիւն հրատարակելով, արդ յառաջիկային կը սկսինք խազերու ուսումնասիրութեան ամենէն ուշագրաւ մասերն հրատարակել։

ԱՐԴԻ ԳՐԱԿԱՆՈՒԹԻՒՆ

ՆՈՐ ՔՆՆԱԴԱՏԻ ՀԻՆՑԱԾ ԿԱՐԾԵԱՑ ԱՌԹԻՒ

ԲԱՑ ՆԱՄԱԿ ԱՌ Գ. ՇԱՀԻՆԵԱՆ

Յարգելի տէր. Յովհան Մանդակունւոյ Քննադատութեան հրատարակութենէն չորս տարի վերջ՝ առիթ ունեցայ այս օրերս կարդալու «Արեւելքի» 4356 և 4357 թիւերու մէջ, այս ուսումնասիրութեանս վրայ գրուած ձեր երկու քննադատական յօդուածները, Ժամանակագրական խնդիրներ՝ հայ եկեղեցւոյ պատմութենէն խորագրով։ Դուք, յաւարտ ձեր քննադատութեան, ցաւ կը յայտնէք, որ ձեզ «վիճակած է (ի հարկէ ոչ բռնադատութեամբ) այս գիրը, որ անկեղծ հիացում մըն էք Հ. Սարգիսեանի աշխատասիրութեանց». և թէ այդ գիրը կատարելով դուք ձեր «խիղճը հանգարտեցուցած էք. վասն զի հեշտընկալ ընթերցանութենէն աւելի բան մ'ըրած էք», դիտել տալով այն ժամանակագրական սխալները, որոնք իբրու այն թէ անգիտակցաբար սպրդած են իմ հրատարակութեան մէջ։ Ես ինքզինքս վիրաւորուած զգալէն աւելի՝ ուրախ եմ որ ձեր խիղճը՝ ուղիղ կամ սխալ կերպով՝ հանգարտեցուցած էք, գրելով զայն՝ ինչ որ կարող էիք գրել։

Ես գովեստն և պարսաւը դրած չեմ երբէք նպատակ իմ գրուածոցս, այլ ճշմարտութիւնը՝ ազատ ամէն անձնական և առանձնական շահերէ կամ ձկտումներէ։ Բնաւ յաւակնութիւն ունեցած չեմ՝ կարծելու, թէ բոլոր իմ գրածներս՝ անվիճելի ճշմարտութիւններ լինին, մանաւանդ այն խնդիրներու մէջ՝ որոնք անստուգութեան թանձր քողով մի ծածկուած են և մեծապէս վիճելի։ Ուստի ինչպէս դուք, այսպէս և ուրիշներ, իրաւանց մէջ են միշտ վերաքննելու և դատելու զանոնք, և ես տրամադիր եմ, առանց դժկամակութեան՝ ոչ միայն լսել լուրջ և անաչառ դատումներ, այլ և օգտուիլ անոնցմէ։ Ահա այս յուսով կարդացի նաև ձեր քննադատութիւնը. բայց յուսախաբութեամբ աւար-

digitised by A.R.A.R.@

տեսցի զայն, ցաւելով իմ և ձեր կորուսած ժամանակի վրայ։ Պատճառը. տեսնենք ի հետեւեալն ։

Ցարգելի տէր, դուք բարեսրտութեամբ գոհ եղած էք — այո՛, մինչեւ անգամ ձեր խիղճը լռեցնելու չափ գոհ — համարելով, թէ ուրիշներէն «աւելի բան մ'ըրած էք». շեշտելով թէ մեր ժամանակագրական սխալները ուղղած էք և անոնց աւերակաց վրայ լաւագոյն շէնք մի կանգնած։ Երանի՜ թէ։ Սակայն մենք կը կրկնենք, թէ ո՛չ, և մեզ հետ ուրիշ ձեռնհաս քննադատներ եւս պիտի երեքնեն նոյնը։ Դուք լռած էք՝ իմ երկասիրութեանս նկատմամբ՝ զայն, զորս պէտք էիք ըսել, և ըսած էք զայն, զորս լռելն աւելի նպաստամատոյց պիտի լինէր թէ՛ ձեզ և թէ իրաց ճշմարտութեանը։ Դուք աշխատութիւն յանձն առած էք քակելու այն նորագոյն ուսումնասիրութեան ժամանակագրական հիմունքը, և փորձած էք հաստատել հինը, առանց նոր փաստ մ'ի մէջ բերելու։ Այս տեսակ քննադատութիւն մի տարբերութիւն ունի՞ արդեօք այն ասպետական շահատակութենէն., որ ժանգոտած և փտտած զէնքերով կը դիմագրաւէ ի մենամարտ իւր ախոյեանին, միտքը դնելով, թէ այդպիսի զէնքեր գործածած պահուն՝ նոր սքանչելեօք պիտի փոխուին ի տէգ և ի վահան ամրակուռ։ Անօգո՛ւտ պատրանք։ Եթէ կը տարակուսիք տակաւին, փորձով տեսնենք ըսածիս ճշմարտութիւնը. ճշմարտութիւն մի՝ որ որչափ խիստ երեւի և դժուարալուր նոր քննադատի մի, սակայն այնչափ եւս կարող է գոլ հրահանգիչ երկուստեք։ Ցառաջենք ի լուր, և կը յուսամ թէ դիտողութիւններս պիտի չանցնին ի զուր։ Իմ սրտիս հետ՝ լեզուս եւս անկեղծ է. և դիտաւորութիւն չունիմ բնաւ զձեզ վիրաւորելու ։

Ա. Մենք դուրս թողած ենք կաթողիկոսաց ցանկէն Մելիտ և Մովսէս մանազկերտցիները, նկատելով զանոնք իբրեւ սոսկ եպիսկոպոսներ և կամ հակակաթողիկոսներ. և այս կէտիս նկատմամբ՝ մեր կարծիքը կը հաստատեն Ժամանակք կաթողիկոսացն հայոց՝ Ժ դարուն գրուած վաւերական յիշատակարանն, ուր նոյնպէս բնաւ յիշատակութիւն չկայ Մելիտի և Մովսիսի, և թէ այդ յիշատակարանին կը համաձայնի նաեւ Շարագրութիւն հայրապետացն հայոց՝ մի ուրիշ ցուցակագիր։ Մեզ հետ են նոյնպէս Յովհան պատմիչէն սկսեալ մինչեւ Մեծն Վարդան և Մխիթ. Այրիվանեցի. իսկ օտար մատենագիրներէն կարող եմք յիշել այժմ Միքայէլ ասորին և Դեմետրիոս Կիւզիկեցի, եթէ չեմ սխալիր, յԸ. դարու (տես Combefis, Avctar. nov. 2. 288 Καθολικοὶ τῆς 'Αρμενίας[1])։ Իսկ դուք առանց այդ ահազին լեգէոնը պարտելու, առանց պատմական ուրիշ

---

1. Այս յունարէն յիշատակարանիս համաձայն կը կարգէ Լը Քիէն (տես Oriens Christianus, T. I. Parisiis 1640, p. 1356–1417) Հայոց մեծաց կաթողիկոսներու թուականները. բայց Յուստինիանոս Բ.ի ժամանակ ապրող Սահակ կաթողիկոսէ մի գրուած կը համարի զայն։ Կարծիք է, որ Երուսաղեմացի Գրիգոր Սարկաւագապետն եղած լինի հեղինակ գրուածիս սկզբնագրին, և այս յոյժ հաւանական է։

Գալլանդի (Bibliotheca Vet. Patrum. T. XIV. Venetiis) անանուն գրուածս Փիլիպպոս միայնակեցի մէկուն մակագրած է, ի ԺԱ դարու. իսկ Գալլանդեայ հրատարակիչը՝ Դեմետրիոս Կիւզիկեցւոյն կու տայ զայն, զոր և Թ. դարու գրիչ մի կը համարի, հաստատուած այն իրողութեան վրայ, որ անանունը՝ կաթողիկոսաց ցանկէն վերջ՝ Սմբատ Բագրատունի իշխան մ'եւս յիշած է. զկնի այլոց, զոր ինքը նոյն կը համարի Բագրատունի թագաւորին կամ Աշոտայ յաջորդին հետ։

Ըստ իս այդ յունարէն գրութիւնն եթէ Դեմետրիոս Կիւզիկեցւոյն համարինք, նա Է դարու վերջը և կամ ի սկիզբն ութերորդին ապրած լինելու է, և ոչ թէ Թ.ին. վասն զի այդ տեղ պարզապէս իբրեւ իշխան յիշուած Սմբատը՝ Բագրատունի թագաւորը չէ և չէր ալ կարող լինել, այլ կամ Սմբատ Վարազտիրոցեան և կամ յետագայ մի այլ իշխան. ապա թէ ո՛չ կաթողիկոսաց ցանկն եւս մինչեւ ինն հարիւրին պիտի հասցնէր, մինչդեռ Սահակ Գ-ով կ'աւարտի, որ 677–703ին կաթողիկոսութիւն վարած է ։

Յունարէն յիշատակարանիս մէջ եղած ազատ = Նախարար և այլ անունները դատելով,

digitised by A.R.A.R.@

փաստերով զոյգ վկայութիւնն եղծանելու՝ կը խիզախէք Հակառակը պաշտպանելու։ Արդ՝ ասիկայ քննադատութիւն չէ, այլ որ և է յառաջադէմ քննութեան առաջքն առնել է։

Բ. Մենք Ղ. Փարպեցւոյ՝ (ԿԲ. եր. 333) Գիւտի մասին աւանդած տեղեկութիւնը Հակառակն գտնելով, ոչ միայն վերը յիշուած Հեղինակութեանց, այլ նոյն իսկ իւր պատմութեան ԿԴ. գլխու վերջին պարբերութեան (եր. 352), իբրեւ եկամուտ՝ իրաւամբ տարակուսական յայտարարած ենք։ Իսկ դուք փոխանակ քննադատօրէն մեր փաստերը ջրելու, Ղազարայ 1873ի տպագրութեան յէջ 352 գրուած երեք տող ծանօթութիւնը, իբրեւ ամենազօրեղ փաստ՝ մեզ դէմ կը Հանէք՝ Փարպեցւոյ յէջ 333 աւանդուածի Հարազատութեան, կամ լաւ եւս Մովսէսի և Մելիտի կաթողիկոսութեան։ Ինչո՞ւ մի քիչ կանգ չէք առներ և քններ, թէ ստուգիւ եթէ Գիւտի նախնիքը Վանանդայ Ոդմսու գիւղէն էին — ինչպէս ունին նաեւ վերը յիշած Գաւազանագրեր և Այրիվանեցին և պատմիչք առհասարակ — ուրեմն բնական է՝ որ ինքն եւս այդ տեղը ծնած ըլլայ և այդ տեղական անուամբ կոչուած. ապա ուրեմն՝ ուրիշ ի՞նչ պատմական պատճառաւ նա, ընդհակառակն, Պատմ. յէջ 333 յանկարծ Տայոց գաւառի Արահեզ գիւղին հետ կը կապուի։ Ապաքէն եթէ կար պատմական պատահար մի և Ղազար անոր տեղեակ, ինչո՞ւ լռեց յիշելու, ինչպէս կը յիշէ Խորենացի Լուսաւորչայ յղութեան տեղը։

Եւ յիրաւի, եթէ Ղազարայ այդ տեղին Հարազատ, և Հոն յիշուած Մելետն և Մովսէսը պահ մի իբրեւ կաթողիկոս ընդունինք, պէտք է որ զոցանէ առաջինը 352–456ին կաթողիկոսութիւն վարած ըլլար. և վերջինն այլ 457–465ին՝ մերձաւորապէս։ Սակայն Եղիշէն՝ որ ըստ արդի քննադատութեան ամենաՀաւանօրէն այդ թուականէն այլ բաւական վերջ գրած և աւարտած է իւր պատմագրութիւնը, Մելետը միայն կը յիշէ տակաւին իբրեւ «եպիսկոպոս Մանազկերտոյ» իսկ Մովսէսի անունը բոլորովին լռած է։ Այս ինչպէս կը մեկնէք, Շահինեան։ Բայց որ և է գիտապատրաստ մեկնութիւն մի տալէն յառաջ՝ կարդացէք, կը յանձնեմք, ուշի ուշով մի և նոյն Հեղինակի Յաղագս միաբնեանց ճառը, որ ըստ Ուս. Վէտտէրի՝ Եղիշէի վերջին գրութիւնն է, և գրուած է յամին 481, և ուր կ'ըսուի. «Ազատ եկեղեցի անկաւ ի ծառայութիւն Հեթանոսաց»։ Այո՛, այսպիսի մի ծառայութիւն կամ պարապութիւն կաթողիկոսական աթոռոյ՝ Գիւտէն յառաջ Հաւանելի է, զոր դուք Մելետով և Մովսէսով կը լեցնէք։ Անցնինք մի ուրիշ կէտի։

Գ. Մենք Սեբէոսի (տպ. Կ. Պոլսոյ 1851, Բ. Դպր. էջ 39) մէկ վկայութիւնը մէջ բերելով՝ Համաձայն Ղ. Փարպեցւոյ, ուզած ենք որոշել Գիւտի կաթողիկոսութեան և մահուն թուականները. իսկ դուք փոխանակ

կարող եմք Հեռուցընել Հաւանօրէն, որ յունարէնը՝ թարգմանութիւն է. և թէ այդ թարգմանութեան Հայերէն անյայտացած բնագիրն աւելի Հին ըլլալու է ժամանակաւ, այն է՝ Է դարուն։ Եթէ Գրիգոր Սարկաւագապետն Համարինք բուն Հեղինակ և գրիչ յիշատակարանիս, մեծ և զօրեղ փաստ մ'եւս պիտի աւելնայ անով ի նպաստ Մ. Խորենացւոյ Հնութեան. վասն զի անոր անուամբ Հրատարակուած ի Ս. Գրիգոր Լուսաւորիչ (տես Սոփերք Հայկ. Դ. Հտ.) ներբողեանին մէջ (էջ 129) ոչ միայն Մ. Խորենացին՝ Քերթողահօր Հետ մի և նոյն անձն կը դնէ կամ նոյնացնէ, այլ պատմութիւնն եւս անոր կը վկայէ՝ ըսելով. «Զոր (այսինքն է Արշակունիներն և Գրիգորի նախնիքը) ազգաբանութեամբ ճառեաց մեզ աջող քարտուղարն Սահակայ Բագրատունւոյ՝ Մովսէս Խորենացի, որ կոչեցաւ Քերթողահայր. ուստի և մեք կարգեցաք յաղագս երանելոյն Գրիգորի »։ և այլն:

Յիշատակարանն՝ որ թէ մեր կաթողիկոսաց թուականներն որոշելու և թէ եկեղեցական պատմութեան ինչ ինչ կէտերու նկատմամբ յոյժ կարեւոր է, մեր ազգային շատերուն տակաւին ծանօթ չէ. ուստի կը յուսանք թէ յարմար առթիւ կարենանք Հրատարակել զայն, Հայ թարգմանութեամբ, կամ Բազմավէպի յաջորդ թիւերուն մէջ և կամ առանձինն։

digitised by A.R.A.R.@

ժամանակագրական և պատմական աւելի հաստատուն փաստերով՝ կամ Սեբէոսի յիշեալ տեղին և կամ մեր եզրակացութեան կարծեցեալ սխալը ցոյց տալու, ամենայն ինչ անորոշ կը թողուք, Սեբէոսի առաջին երկու դիտողութիւններ իրեն չեն ըսելով, և կամ Հ. Գ. Զարբհանալեանի մէկ վկայութեանը դրկելով՝ գոհ կը լինիք։ Սակայն մենք, և մեզ հետ արդի քննադատութիւնը աւելին կը պահանջենք։

Այո՛, կարելի է որ Սեբէոսի այդ դիտողութիւնները ուրիշ ժամանակի գործ լինին, կարելի է, որ ժամանակագրական անճշդութիւններու ենթարկուած լինին ժամանակաւ. բայց ոչ դուք Հ. Զարբհանալեանի Պատմ. Հայ. Մատենագրութեան 417 էջի պարզ յայտարարութեամբ միայն այդ կէտերը կարէք ապացուցանել, և ոչ այլ մենք կրնանք համոզուիլ ձեր այդ ապացուցութեամբը։ Իրաւ է որ Գր. Խալաթեանց իսկ յետնագոյն ժամանակի գործ համարեցաւ Անանունը, սակայն Ստ. Մալխասեան այլ նորա հակառակ՝ Սեբէոսի պատմութեան հարազատ մասն լինելու բաւական զօրեղ ապացոյցներ տուաւ մեզ վերջերս։ Ես իսկ հաւանական կը համարիմ, թէ Անանունի եթէ ոչ ժամանակագրական, այլ գէթ Հայկայ և հայկազանց պատմութեան վերաբերեալ մասը կարող է ոչ միայն Սեբէոսէն, այլ նոյն իսկ Ղ. Փարպեցիէն իսկ աւելի հին լինել։ Սակայն մեր խնդրին գալով, տէր Շահինեան, կ'ըսենք՝ թէ յամենայն դէպս Սեբէոսի աւանդածը — Յունաց Ղեւոնդիոս[1] կայսեր և Պերոզի գահակալութեան 25 տարւոյ համեմատութեան մասին — ճիշդ է և առանց երկբայութեան, դիտելով ըստ Հենր. Գելցերի (տես Abriss der Bizand. Keisergeschichte S. 922, Munich 1897) որ կայսերս գահակալութիւնն եղած է ի Տարսոն յամի Տեառն 484։ Իսկ որովհետեւ այս թուականս կը համապատասխանէ Պերոզի թագաւորութեան 25 տարւոյն, դիտելով որ սա գահը ելած է, ըստ Նէօլդէքէի (տես Tabari, Gesch. der Sasaniden և այլն), յամին 457—459 Յուլ. 30։ Եւ որովհետեւ Ղ. Փարպեցին եւս (Պատմ. ԿՁ. էջ 352—359) Գիւտ կաթողիկոսի՝ առ Ղեւոնդիոս կայսրն դիմելու պատճառը, այսինքն է Վրաց Վախթանգ թագաւորի ձեռքով ուրացող Վազգէնի սպանուիլն, և այդ առթիւ Հայոց եւս ապստամբիլն յարքայէն արքայից, մինչ համաձայն Սեբէոսի՝ Պերոզի թագաւորութեան 25րդ ամին կը դնէ. ապա ուրեմն մեր այդ հիման վրայ հաստատած ժամանակագրական շէնքն իսկ, կը հարկադրուինք կրկնել, թէ հաստատուն է։

Դ. Մենք Յովհ. Մանդակունւոյ — իբր անմիջական յաջորդին Գիւտի, — կաթողիկոսութիւնը, դրած ենք յամին 484—485, և մահը 498ին. իսկ դուք ընդհակառակն մերձաւորապէս յամին 480 կը համարիք նորա կաթողիկոսութիւնն, և մահը 488—489։ Ձեր նախընտրած բայց և անհաշիւ այդ թուականն իսկ՝ աւանդական թուականէն, այսինքն է՝ 6—7 տարիէն անդին կ'անցնի, զոր դուք — մեզ ընդդիմաբանած ժամանակ — նուիրական և անփոփոխելի կը յայտարարէք։ Այս մասին ձեզ ընդդիմաբանելն ա՛լ աւելորդ կը համարինք, եթէ ինչ որ ձերն է՝ գոհացուցիչ է. ինչ որ դուք կը խորհիք՝ ներելի է, միով բանիւ դի Das ist deine Welt, das ist eine Welt։ Սակայն անմիջապէս արտայայտած ձեր այս գաղափարին հետ՝ «որովհետեւ Ղազարու թուղթը (իմա՛ առ Վահան Մամիկոնեան) գրուած պահուն՝ Հայրապետը մեռած էր ապահովապէս» ինչպէս հաշտուինք, որ կը հակառակի և հակառէ անմիջապէս քիչ յառաջ յայտնած միւս գաղափարին, «Եթէ Պ. Գ. Խալաթեանցի հետ ընդունինք թէ Ղազար Փարպեցիի գրած թուղթը՝ շուրջ 480ին գրած է»։ Ո՛չ, տէր Շահինեան, իրարմէ անկախ և իրարու անգիտակից այդ երկու գաղա-

---

1. Այս կայսրը պէտք չէ շփոթել Զենոնի նախորդ կայսեր Լեւոնի հետ, տէր Շահինեան, գահակալել տալով իրեն յամին 474, մինչեւ — ինչպէս պիտի տեսնենք անմիջապէս — նա գահակալած է 484ին։ Լեւոն անունն զձեզ գայթակղեցուցեր է անշուշտ. բայց յանցանքը մերը չէ, այլ Ղազարու և Սեբէոսի, զոր կոչած ենք հաւատարմութեամբ։

digitised by A.R.A.R.@

փարմները՝ երբեք կարող չեն և պիտի չլինին ճշմարտութիւն մի ծնանելու։

Ուստի մենք Խալաթեանցէն — ճշգութեամբ թէ անճիշտ կերպով մէջ բերած — ձեր այս թուականը ձեզ թողլով, և Ղազարայ թղթի պարագաները միայն ի նկատի առնելով, կ'ըսենք, թէ այն կաթողիկոսը, որուն դէմ կը գանգատի Փարպեցին և զոր խստիւ կ'եպերէ, ոչ է այլուր մեծապէս գրուատած Յովհ. Մանդակունին, այլ Բաբգէնը։ Իսկ որովհետև սա 497—498էն յառաջ չէր կարող կաթողիկոսական գահուն վրայ բարձրացած լինել, գիտելով Հ. Ղ. Ալիշանի հետ (տես Ժամանակագրութիւն տպ. ի Վենետիկ 1880, էջ 175) որ նա յամին 499 յաջորդած է Մանդակունւոյն. ուրեմն ասկէ իսկ կը հետևի, թէ Յովհան Մանդակունին մերձաւորապէս 498ին մեռած է, և թէ Ղ. Փարպեցւոյ առ Վահան ուղղած թուղթն իսկ այս թուականէս վերջ գրուած լինելու է հաւանօրէն։ Նորէն մտածեցէք, լաւ որոճացէք, և պիտի համաձայնինք։

Ե. Բաբգէնի 5—6 տարի կաթողիկոսութիւն ընելու ստուգութիւնը առած ենք մեր Մանդակունւոյ Քննադատութեան յէջ 13 մէջ բերուած երկու հնագոյն յիշատակարաններէն, որոնք ըստ ամենայնի վաւերական լինելու բոլոր յատկութիւնն ունին, և որոնց կը հետևին մեր պատմագիրները և ժամանակագիրները և յոյն յիշատակարանը՝ նշանակելով «ἔτη 'Ε»։ Ի Ս. Ղազար տպուած յիշեալ ժամանակագրութեան բանիրուն հեղինակն իսկ ունի այնպէս, գնելով նորա յաջորդ Սամուէլ կաթողիկոսի գահակալութիւնը կամ ընտրութիւնն յամին 505։ Իսկ դուք երբ ուսումնասիրուած և ձեր գիմացը գրուած բոլոր հեղինակութիւնները անտես բրած, միայն անորոշ հարցականներ և հարցեր կ'ուղղէք մեզ, ալ ի՞նչ կրնանք ընել, ինչո՞վ երաշխաւորել ձեզ։ Հաճեցէք փաստերով, և ոչ տարակոյսներով ջրել բոլոր այդ հեղինակութիւնները, որպէս զի մենք ալ կարենանք ըսել, թէ նոր քայլ մ'առինք, և դուք ալ կամաւոր սկեպտականութեան պատանքը շահաբեր կերպով լուծած ըլլաք։

Իսկ գալով Մանդակունւոյ կաթողիկոսութեան թուականին՝ — զոր դուք չափազանց և քմահաճոյ կը վարկանիք, — իրաց աւելի համաձայն է՝ քան ձերինը։ Մենք ընդ ամէնը 12—13 տարի նշանակած ենք, մեր գիմաց ունեցած յիշատակարանաց և քննադատական եզրակացութիւններու բանաւոր հիման վրայ հաստատուած. և այդ բանը կը վերահաստատէ նոյն իսկ Ժամանակք կաթողիկոսացն Հայոց յիշատակարանով, ուր նոյնպէս 12 տարիներ տրուած են կաթողիկոսին։ Իսկ ձեր 9—10 տարիներն ուստի՞ յառաջ եկան յանկարծ. աւանդութիւնն ի հարկէ այդպիսի թիւեր չի ծնանիր, այլ 6—7 ո՞չ ապաքէն արդիւնք են մեր տուեալ թիւերուն, զորս ըստ կամս նուազեցուցեր էք։

Այս իսկ ըսած ըլլանք, որ մենք աւանդութիւնը չափով միայն կը յարգենք, այսինքն է՝ յստակելով զայն իւր դարաւոր եկամուտ ապաւադութիւններէն. զի միջուկը մեզ հարկաւոր է։ Եւ եթէ աւանդութիւնք կամ աւանդութեան կուրօրէն հետևող պատմագիրները տուած են Մանդակունւոյ կաթողիկոսութեան նուազ տարիներ, և Գիւտին 15—17 տարիներ, դա կը նշանակէ, թէ նոքա նկատմամբ առաջնոյն ճիշտ գտնուած են, վասն զի կամ անոր տալիքը՝ նախորդ կաթողիկոսներուն ընծայած են և կամ նորա երկար կենաց հետ չեն կրցած ծանօթանալ, պակասութեամբ քննադատութեան։ Իսկ նկատմամբ վերջնոյն՝ աւելին շայլած են քան զարժանն. վասն զի նախորդ Մելիտի և Մովսէսի կաթողիկոսութիւնը չճանաչելով՝ 452էն, այսինքն է՝ Յովսեփայ մահուանէն վերջ եղած տարիները Գիւտին վրայ բեռցուցած են։ Գիտեմ թէ այս տեսութիւնս ձեզի ախորժելի չէ, բայց աւելի ճշմարիտ է։ Իսկ դուք, յարգելի քննադատ, որ այնքան սիրով և յարգանօք պինդ բռնած էք աւանդութիւնը՝ կլոր և բոլոր, ինչպէս կը մեկնէք զայնս. ինչո՞ւ ցոյց չէք տար մեզ, միաչար աւանդութեամբ, թէ Յովհ. Մանդակունւոյ կաթողիկոսութեան 6—7 տարիներն են միայն ուղիղ, իսկ միւսը սխալական. ինչո՞ւ նոր թիւեր ևս կը կցէք հիներուն։ Մենք զայն կը սպասէինք ձեզմէ, իսկ դուք ձեր սովորական ոճով փախուստ ևս տուած էք միշտ

digitised by A.R.A.R.@

հետի և հետի։ Սակայն գիտնալու էք, որ իրաց հետ՝ արդի լուրջ քննադատութիւնն եւս գիտութիւն և խղճամիտ ստուգաբանութիւն կը պահանջէ։

Զ. Ծննդեան և Յայտնութեան տօները Մանդակունիէն յառաջ, այսինքն Ե՛ դարու Ս. Սահակայ, առանձին տօնելու, և ապա Մանդակունւոյ ժամանակ վերստին իրարու հետ միացնելու մասին՝ մենք մէջ բերած ենք մեր Քննադատութեան մէջ (էջ 29) Անանիա Շիրակացւոյ պէս ծանրակշիռ հեղինակի մի մեկ վկայութիւնը, և անոր ձայնակից զատած մի ուրիշ յիշատակարան, այսինքն է Տարագրութեան հայրապետացն Հայոց. այսպէս նաեւ Ոսկեբերանի Յաղագս ծննդեան ԻԱ և ԼԱ ճառերը։ Իսկ դուք ձեր պատասխանին՝ անախորժ գտնելով զայն, մէկ խօսքով «անհարազատ և կեղակարծ» կը համարիք Անանիայի գեղեցիկ գրութիւններէն մին, այն է՝ ի Յայտնութեան Տեառն և Փրկչին մերոյ ճառը, և զիս այլ այդպիսի անհարազատ յիշատակարաններու «նախասիրող» մէկը։ Ես չեմ յիշեր քննադատ մի — նորա գործոց բանիբուն հրատարակչէն սկսեալ — որ Շիրակունւոյ այդ գրութիւնը հարեւանցի կամ հիմնաւոր փաստերով անհարազատ ցոյց տուած լինի. իսկ դուք եթէ ունէիք զանոնք առձեռն պատրաստ՝ ապա ուրեմն ինչու մէջ տեղ չի բերիք։ Եւ եթէ ժխտելը միայն լինէր փաստ, դուք կարող էիք միւս յիշատակարանի և Ոսկեբերանի յարակից վկայութիւններն եւս մերժել։ Սակայն ներողի ինձ ըսել, թէ դուք «բանասիրութեան արձակած վերջին վճռոյն» իսկ այնչափ տեղեկութիւն ունիք՝ որչափ Անանիայի յիշեալ ճառին։ Դարձեալ՝ ենթադրելով իսկ թէ յիշեալ գրուածն Շիրակունւոյն չըլլայ, այլ մի ուրիշ Անանիայի կամ Յով. Օձնեցւոյն. սակայն և այնպէս՝ նորա աւանդածը հետաքրքրական նորութիւն մ՚է, և ես այդ նորութիւնը պարզ վերապահութեամբ ներկայացընել ուզած եմ. բան մի՝ որ ձեր պապերն եւս ըրած են, և յաջորդ սերունդն եւս պիտի շարունակէ։ Եթէ դուք սրամալիր էք յաճախ քիչէն շատը, և շատէն այլ քիչը, հասկանալու, մենք անպարտ ենք։

Է. Ես՝ իմ Քննադատութեան մէջ՝ ոչ թէ Մանդակունին կամ նորա վարք ու բարքը բաղդատած եմ «խօզարան» Զօլայի հետ, այլ բացատրութեամբ՝ իրաց ճիշդ պատկերացընող և իրական գիմագծերով ներկայացուցիչ անոր լեզուն կամ գրիչը. իսկ դուք (փարիսեցիական) գայթակղութեամբ իմ բուն միտքս թողուցած՝ անոր իբրեւ հակապատկեր գործածած բառս միայն մէջ կը բերէք՝ չակերտի մէջ, որն ակն յայտնի պատախագ մ՚է ձեր սխալ հասկացողութեան։ Այս տեսակ գայթակղութիւն մի ոչ միայն գործ չունի քննադատութեան հետ, այլ և փութով ուղղելի, ապա թէ ոչ՝ Յովհ. Դ. 7, և Մարկ. ԺԴ 3 գլուխներն իսկ, ուր աստուածային գթութիւնն և սէրը կը բերուին ի հանդէս՝ առ մարդկային ոչնչութեամբ, պիտի լինէին ձեզ առիթ գայթելոյ և գլորման։

Դարձեալ, թէ որ լաւ մի բաղդատած լինէի մարդս մ՚հետ, իրաւունք ունէիք զարմանալու և զայրանալու. բայց քանի որ խօսքը վսեմութեան տիպար Մանդակունի հայրապետին և պերճախօսի մասին է, որուն վրայ օտարք անգամ կը սքանչանան, և զոր իբրեւ աշակերտ համեմատեր էի ճարտասանութեան գերվարժապետներու՝ Ոսկեբերանի և Սենեկայի հետ, չգիտեմ թէ զարմանալու ինչ արդար պատճառ կայ, մանաւանդ քննադատելու, երբ համեմատուած օրինակներն ինքնին կը խօսին։

Այս նամակս գրելու տրամադիր չէի, թէ որ իմ լռութիւնը արհամարհանք չհամարուէր, և եթէ դուք ձեզ հետ՝ «Արեւելքի» անմեղ ընթերցողներէն ոմանց միտքը եւս պղտորած չլինէիք։ Կը յուսամ՝ թէ զիրար հասկցանք. հասկցան զմեզ նաեւ ընթերցողք։ Ողջ լերուք.

Մնամ յարգանօք

Ձերդ բարեացակամ
Հ. Բ. ՍԱՐԳԻՍԵԱՆ

Վենետիկ 25 Օգոստոս 1900.